Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝	ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Թեմա՝	Աշակերտ-ծնող-ուսուցիչ համագործակցությունը ներառական կրթության համատեքստում
Վերապատրաստող, մենթոր՝	Նարինե Բաղդասարյան
Կատարող՝	Մ. Էվինյան

Վանաձոր 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------3

ԳԼՈՒԽ 1.

ԱՇԱԿԵՐՏ-ԾՆՈՂ-ՈՒՍՈՒՑԻՉՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ,ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1.Համագործակցության դերը----------6

1.2.Համագործակցության սկզբունքները ---------- 11

1.3.Համագործակցության ուղղությունները ---------- 13

1.4.Համագործակցության արդյունքները ---------- 15

ԳԼՈՒԽ 2.

ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԿԱՐևՈՐՈՒԹՅՈՒՆԸ ----- 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ---------- 18

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ---------- 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ ---------- 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր երեխա ունի կրթության հիմնարար իրավունք, ինչն ամրագրված է ՀՀ օրենքներով[1], միջազգային պայմանագրերով և մի շարք ենթաօրենսդրական ակտերով: Ներառական կրթությունը այն կրթությունն է, որի դեպքում բոլոր աշակերտների հանդեպ պետք է ապահովվի հավասար, սակայն ոչ նույնակերպ վերաբերմունք՝ ստեղծելով սովորողների հետ համագործակցող, նրանց աջակցող, դաստիարակող միջավայր, որը պետք է տրամադրի բոլորանհրաժեշտպայմաններնուհարմարությունները, որպեսզի աշակերտները կարողանան հասնել հաջողությունների:

Դեռևս հին ժամանակներից երեխաների դաստիարակության գործընթացով հիմնականում զբաղվել են ուսուցիչները՝ անտեսելով սովորողի ընտանեկան կրթական միջավայրի առանձնահատկությունները: Այժմ ուսումնականհաստատություններումկրթական ծրագրերը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով սովորողիանհատականությունը:Ինչպես հայտնի է, անհատականություն ձևավորվում է ընտանիքում, քանի որերեխան իր ժամանակի մեծ մասն անցկացնում էընտանիքում և նրա զարգացման վրա մեծ ազդեցություն ունիընտանեկան միջավայրը:Միևնույն ժամանակ մեծ է դպրոցի դերը անհատի զարրգացման,ձևավորման և դաստիարակությանգործում:Կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման կարևորագույն գործոններից մեկը աշակերտի, ծնողի,

ուսուցչի միջև համագործակցությունն է: ՈՒսուցչի ևսովորողի, ծնողիկամ նրա օրինական ներկայացուցչիհետհամագործակցությունը պետքէիրականացվի՝ հաշվի առնելովբարձր մարդկային որակները, էթիկայի նորմերը:Երբ ընտանիքը և ուսումնական հաստատությունը աշխատում են համագործակցելով՝երեխայի կարիքին համապատասխան, միջավայրայինհարմարեցումներիապահովումը ավելի հեշտ է դառնուում,ինչի արդյունքում շահում է հենց երեխան:Այս նախադրյալներընպաստում են,որպեսզի դպրոցն ու ընտանիքն ունենան միանման սպասումներու օժանդակեներեխայի ուսման գործընթացին:

Ըստ ռուս մեծ ուսուցիչ Սուխոմլինսկու՝<<Ընտանիքումարմատներ են գցվում, որոնցից հետոաճում են ճյուղեր, ծաղիկներ և պտուղներ>>:[2]

Թեման արդիական է մեր օրերում, քանի որ ՀՀ-ումիրականացվում է համընդհանուր ներառական կրթություն: Նախաձեռնվել են նոր ընդունված համակարգինհամահունչ զանազան ծրագրեր՝ ուսուցիչներինև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողերեխաներին օժանդակելու համար, որոնց բավարարման համար շատ կարևոր էճիշտ կազմակերպված աշխատանքը,որտեղուսուցիչըկարողանում է լուծում տալ շատ խնդիրների, զարգացնում է իր մանկավարժական որակները, ձեռք է բերում բազմաթիվ նոր ու պահանջված կարողություններ:Հետազոտության արդիականությանհամարհիմք է հանդիսացել նաև կյանքի՝ մարտահրավերներով լի ժամանակակից շրջափուլում սովորողի կրթական կարիքներիապահովման շրջանակներումծնող-ուսուցիչ հաստատուն կապիանհրաժեշտությունը,որն ունակ է մեծապես ազդել սովորողիուսումնառության որակի բարձացման վրա:

Հետազոտական թեմայի նպատակը՝ համագործակցության միջոցով ցույց տալ և ապացուցել, որ համագործակցային աշխատանքը, որքան դրականազդեցություն կարող է ունենալուսումնական հաստատությանգործունեությանն ուսուցիչների աշխատանքի վրա:Այս ամենին հասնելու համար պետք է.

- կապ ստեղծել դպրոցին սովորողիծնողի միջև
- ներգրավել ծնողինդպրոցական գործընթացին, համագործակցել ուսումնադաստիարակչականաշխատանքների կազմակերպման

ժամանակ,ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադպրոոցական միջոցառումներին

- բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության գոործընթացում
- ցույց տալ ուսուցչի արդյունավետության փոխհամագործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում:

Հետազոտությանթեմայի խնդիրը՝ ուսումնասիրելներառականկրթության դերը, բազմամասնագիտական թիմի գործունեության առանձնահատկությունները, դիտարկել մանկավարժահոգեբանական թիմի աջակցող մասնագետ-աշակերտ-ուսուցիչ-ծնող համագործակցության դերը արդյունավետության հասնելու գործընթացում,ինչպես նաև ձևակերպել և հիմնավորել համագործակցության անհրաժեշտությունը դպրոցում, ցույց տալ կարևորությունն ու արդյունավետությունը, ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանըվերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործում:

ԳԼՈՒԽ 1. ԱՇԱԿԵՐՏ-ԾՆՈՂ-ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ,ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

Ըստ **Քրիստոֆեր Ռիվի**՝<< *Սկզբում երազանքներն անհնար են թվում, այնուհետև՝ անիրականանալի, իսկ հետո՝անխուսափելի*>>:[3]

Երեխայի զարգացման գործընթացում ընտանիքը այն կարևորագույն օղակն է, որտեղ տեղի է ունենում ամենակարևորը՝ երեխաների ծնունդն ու դաստիարակությունը, հասարակության ապագա անդամների նյութական և հոգևոր արժեքների ստեղծումն ու անհատականության ձևավորումը:Հայտնի է,որ ընտանեկան միջավայրումտեղի է ունենում երեխայի առաջնային սոցիալականացումը, դերայինև վարքագծային կարծրատիպերի, արժեքային համակարգերի և աշխարհայացքի ձևավորումը:Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության և կարիքների մասին, կրթում ու դաստիարակում նրան, ապահովում հոգեբանական հանգստություն ու հարմարավետություն: [4]

Երբ երեխան դառնում է դպրոցահասակ,դաստիարակման և կրթմանգործընթացը տեղափոխվում է կրթական հաստատություն:Այս փուլումընտանիքը հանդիսանում է այն սոցիալական միջավայրը, որտեղ երեխան դպրոցում անցկացրած ժամերից հետո փորձում է վերլուծել օրվա իրադարձությունները, տպավորությունները և տեղեկությունները:

Հատկանշական է,որ դպրոցական կյանքում ծագող խնդիրների նկատմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերված սոցիալական դիրքորոշումները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են դժվարությունների դրսևորմանը, այդ իսկ պատճառով ընտանիքի դերը երեխայի հոգեկան առողջության գործում եղել և մնում է միշտ արդիական։

Երեխայի կյանքում կրթական հաստատության գոյությունը չի նվազեցնում ընտանիքի դերի կարևորությունը, ուստի շատ կարևոր է,որ ընտանիքն ու դպրոցը հանդես գան որպես գործընկերներ,[5]քանի որ դպրոցների, ծնողների,սովորողների և մասնագետների միջև համագործակցությունը կրթականգործընթացի կարևոր գործոններից մեկն է, հատկապես ներառական կրթության պայմաններում, երբ հաջողությունը կախված է կրթության գործընթացին մասնակցող բոլոր օղակներից և մարդկանցից։

Երբ ծնողի ներգրավվածությունը երեխայի կրթության կազմակերպման գործընթացում հասնում է նվազագույն մակարդակի, ընտանիքը դուրս է մղվումերեխայի կրթության հարցերով զբաղվող թիմի աշխատանքներից։Նրան կարծես տրվում է միայն մասնագիտական կարծիք՝ լսողի դերը։Մանկավարժական աշխատանքները երեխայի գնահատականների, ծրագրային նպատակների վերաբերյալ տեղեկություն հաղորդելիս օգտագործում ենմասնագիտական բառապաշար, որը ոչ միշտ է հասկանալիընտանիքի անդամներին և անուղղակի ուղերձ է առ այն, որ նրանք թիմի անդամ չեն։Արդյունքում համագործակցություն տեղի չի ունենում։[6]

Լավ արդյունքի հասնելու համար դպրոցը պետք է հետաքրքրված լինի ծնողների հետ ակտիվ համագործակցությամբ։Համագործակցության համարգոյություն ունի Դեյի

<< Ծնողների ապրումակցման քարտեզ>>[7] գործիք, որի միջոցովմասնագետները կարող ենվեր հանել այն ոչ տեսանելի թյուրըմբռնումները, որոնց պատճառով ընտանիքը չի ցանկանում մասնակցել երեխայի դպրոցական կյանքին։Այս քարտեզն ուսուցիչներին հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալուընտանիքի պատկերացումները, իսկ ընտանիքին օգնում է ավելի ընդունվելու։Քարտեզը խթանում էուսուցիչներին մտածել չորս հարցերի շուրջ

ա) ի՞նչ են զգում և մտածումծնողները

բ) ի՞նչ են տեսնում և լսում ծնողները

գ) ի՞նչ են անում և ասում ծնողները

դ) ի՞նչ են ցանկանում ծնողները(աղյուսակ 10)

Աղյուսակ 1. Ծնողների ապրումակցման քարտեզ

Ի՞նչ են մտածում ու զգում ծնողները	Ի՞նչենտեսնումուլսումծնողները
Ի՞նչ են ասում և անում ծնողները	Ի՞նչենցանկանումծնողները
Ի՞նչմտավախություններունենընտանիքները	Ի՞նչ օգուտենքաղումընտանիքները

Այս գործիքի կիրառության ընթացքում տեղի է ունենում համագործակցություն ընտանիքի և դպրոցի միջև, որի արդյունքում փոխվում է ընտանիքի դերը: Ընտանիքի դերը վերափոխվում է երեխայի ուսումնառության պլանավորման գործընթացին վերաբերող տեղեկատվությունը պասիվ ստացողից՝ դառնալով ակտիվ մասնակցողի:Այս գործընթացը վճռական նշանակություն ունի հատկապեսկրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ճիշտ պլանավորման և արդյունավետ իրականացման համար:[8]

Մ. Երմոլովայի հետազոտությունները փաստում են, որ երբ ծնողներն ակտիվ մասնակցում են ուսուցման գործընթացին, երեխան ցուցաբերում է ավելի բարձր առաջադիմություն, դրական վարք, հարգալից վերաբերմունք դասընկերների, դպրոցի և ուսուցիչների հանդեպ, ունենում է հավատ սեփական աձի և հնարավորությունների նկատմամբ, ինչն էլ խթանում է նրանց ակտիվությունն ու մասնակցությունն ուսուցման գործընթացում:[9] Փորձը ցույց է տալիս, որ ծնողների և ուսուցիչների շփման և արդյունավետ համագործակցության արդյունքում նկատվում են սովորողի կայուն և շարունակական ձեռքբերումներ. նրանց մոտ ավելի արագ են ձևավորվում և զարգանում սոցիալական հմտությունները, վարքը դրականորեն է վերափոխվում ինչպես տանը, այնպես էլ՝ դպրոցում: Այդ հմտությունները կարևոր են ինչպես դպրոցական գործունեության համատեքստում, այնպես էլ՝ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:[10]Ըստ հայտնի մանկավարժ Ջ.Դիլոնի՝երեխաները դպրոցը պետք է պատկերացնեն մի վայր, որտեղ նրանց ջանքերը հանգում են

հաջողությունների, և այդ հաջողությունները մեծանում են, երբ ծնողները և ուսուցիչները գտնվում են սերտհամագործակցության մեջ և պատրաստ են օգնել երեխային անհրաժեշտության դեպքում: Հենց այս պարզ պատճառով էլ դպրոցը պետք է ստեղծի բարենպաստ և հարմարավետ միջավայր ուսումնական գործընթացի սահուն և արդյունավետ իրականացման համար, որտեղ երեխան կարող է ունենալ բազմաթիվ հետաքրքրություններ, լինել նախաձեռնող, մասնակցել մի շարք որոշումների կայացմանը, սովորել ինքնապաշտպանություն և այլն: Ընտանիքի և դպրոցի համագործակցության գործընթացը ենթադրում է միասնական մոտեցումներ և պարտավորություններ երեխայի կրթական գործընթացում: Համագործակցության ընթացքում դպրոցը պետք է ներգրավի ծնողին դպրոցական միջավայրում՝ թույլ տալով նրանց ակտիվ մասնակցել դպրոցի կազմակերպած միջոցառումներին կամ երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը՝ հանդես գալով որպես լիիրավ գործընկերներ:[11]Այս գործընթացը նաև նպաստում է ծնողավարման հմտությունների զարգացմանը: Համագործակցության արդյունքում փոփոխվում են ծնողների սոցիալական, հուզական և անձնային հատկանիշները. նրանք սկսում են ավելի լավ հասկանալ իրենց երեխաներին, դառնում են ավելի հոգատար, ինքնավստահ, գնահատում են երեխայի ձեռքբերումները, ավելի մեծ ուշադրություն դարձնում նրա սոցիալական, հուզական և մտավոր զարգացմանը, հաճույքով միանում են երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին, ինչպես նաև դրական հարաբերություններ են ստեղծում իրենց երեխայի ուսուցիչների հետ: Համագործակցությունը դրականապես է անդրադառնում ոչ միայն սովորողի ընտանիքի վրա, այլև դպրոցի վրա, քանի որ ուսուցիչներն ավելի ինքնավստահ են դառնում, ձևավորվում է հարգանք սեփական մասնագիտության և կատարված աշխատանքների նկատմամբ, աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ, դպրոցական ծրագրերը դառնում են ավելի հաջողված:[12]Այսպիսով՝ ուսուցիչ-ծնող-մասնագետ համագործակցության նպատակն է խրախուսել կայուն, շարունակական և արդյունավետ գործունեություն դպրոցական համայնքի բոլոր անդամների միջև՝ ուսուցիչ, մասնագետ, ծնող և սովորող: Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է ստեղծել՝

- գործուն և ակտիվ խմբեր, որոնք ուղղված կլինեն գործողությունների պլանավորմանը, կազմակերպմանը, իրագործմանն ու գործընկերային հարաբերությունների գնահատմանը

- քաղաքականություն և ռազմավարություն դպրոցական կրթության համատեքստում, որտեղ հստակ ամրագրված կլինեն արդյունավետ համագործակցության սկզբունքները և փորձը
- օգնության տրամադրման հնարավորություն համացանցի միջոցով, որը թույլ կտա դպրոցական հաղորդագրություններում կիսվել մտահղացումներով, խնդիրներով,
- արդյունքների, գրանցած հաջողությունների հաշվետվություններ,կայացման հստակ մեխանիզմները
- տարեկան պլանի իրականացման համար համագործակցային գործողությունները
- տեղեկատվական նյութերի տրամադրման հարթակները՝ դպրոցներում իրականացվող համագործակցային ծրագրերին օժանդակելու նպատակով:[13]

1.2.ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Անժխտելի է, որ ընտանիք-դպրոց համագործակցությունը դրական անդրադարձ է ունենումուսումնական գործընթացի մասնակիցների վրա և բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Ընտանիք–դպրոց համագործակցությունը բարդ գործընթաց է, որն ունի բազմաթիվ մեխանիզմներ, սկզբունքներ, մոտեցումներ: Դպրոցի և ծնողների համագործակցային աշխատանքները կարող են իրականացվել ինչպես խմբային (ծնողական ակումբներ, խմբային խորհրդատվություններ, խնդիրների քննարկումներ, բաց դռների օր, ծնողական դասախոսություններ, ծնողական ժողովներ, փորձի փոխանակման ծրագրեր, հարց ու պատասխանի երեկոներ), այնպես էլ անհատական (անկետավորումներ, խորհրդատվություններ, տնայցեր, զրույց, հիշեցման թերթիկներ, գործնական աշխատանքներ, նամակագրություն, հեռախոսային զրույցներ) ձևերով: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են որոշակի խնդիրներ: Սակայն միայն ծնողական ժողովները բավարար չեն արդյունավետ համագործակցություն ձևավորելու համար: Դպրոցի և ընտանիքի համագործակցության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկ այլ ձև է ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումը:

Հիմնականում այդ խորհրդատվությունները կրում են անհատական բնույթ: Այդ ընթացքում ընտանիքին տրամադրվում է ոչ միայն մանկավարժական տեղեկատվություն, այլև ցույցաբերվում է հուզական աջակցություն: Այսպիսով՝ մանկավարժները և ծնողներն ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ: Այսպիսով՝ դպրոցը երեխային տալիս է ակադեմիական գիտելիքներ և ձևավորում գիտակցական վերաբերմունք իրականության նկատմամբ, իսկ ընտանիքն իր հերթին ապահովում է երեխայի գործնական փորձառությունը կյանքում: Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է հետևել ստորև ներկայացված սկզբունքներին:

Վստահել: Ծնողների հետ արդյունավետ շփումը և հաղորդակցումը սկսում էվստահությունից: Կարևոր է, որ ուսուցիչները վստահեն ընտանիքին, իսկ

ընտանիքն էլ իր հերթին պետք է վստահի ուսուցիչներին, և ակտիվ մասնակցություն ցուցաբերեն իրենց երեխայի կրթության ու զարգացման գործընթացում: Երբ ծնողը ինչ-որ բան է պատմում ուսուցչին, պետք է վստահեցնել նրան, որ այդ տեղեկությունը գաղտնի է:Պահպանել երկկողմանի կապ: Արդյունավետ հաղորդակցում հաստատելը թույլ է տալիս երկու կողմերին էլ հասկանալ միմյանց պահանջները և նպատակները: Երբ ուսուցիչը խոսում է ծնողների հետ, պետք է հարցեր տա ոչ միայն ուսումնական բնագավառներից, այլև աշակերտի հետաքրքրություններից: Հարցերի միջոցով ուսուցիչը կարող է տեղեկատվություն հավաքել ոչ միայն աշակերտի, այլ նաև նրա ընտանիքի վերաբերյալ:

Համագործակցել: Համագործակցող կողմերըընդհանուր նպատակներ սահմանելիս պետք էընդհանուրեզրեր գտնեն հաջողության հասնելու համար: Երբ առաջանում է որևէ խնդիր, դժվարություն, պետք է այն քննարկել ծնողների հետ: Պարբերաբար շփվեք ծնողների հետ, և նրանք էլ իրենց հերթին կներկայացնեն ձեզ այն խնդիրները, դժվարությունները, որոնք նկատել են երեխայի մոտ: Ուսուցիչը պետք է միշտ հիշի, որ ընտանիքները տարբեր են, և բոլորի հետ գործընկերային հարաբերություններ հաստատելիս պետք է ցուցաբերել անհատական մոտեցում:**Կրել ընդհանուր պատասխանատվություն:** Ծնողները և ուսուցիչները պետք է կիսեն պատասխանատվությունը տանը և դպրոցում ծագած խնդիրների լուծման ժամանակ՝ սահմանելով հստակ նպատակներ, ռազմավարություններ և ձգտել միևնույն արդյունքին:

Լավատես լինել: Ծնողների և ուսուցիչների փոխհարաբերությունները կառուցվում են լավատեսության հիմքի վրա: Երբ ուսուցիչը հաղորդակցվում է ընտանիքի անդամի կամ սովորողի հետ, անհրաժեշտ է խոսակցությունը սկսել դրական, լավատեսական նոտայով:

Պահպանել ջերմ հարաբերություններ:Դպրոցը երկար ճանապարհ է անցնում ծնողների հետ, ուստի պետք է փորձել պահել ջերմ և բարիդրացիական հարաբերություններ:

Եղեք ընդունող և աջակցող:Յուրաքանչյուր դժվարին իրավիճակում ուսուցիչը պետք է առաջարկի իր աջակցությունը ծնողին:

Խթանել և քաջալերել: Որպեսզի ծնողը իրեն զգա արժեքավոր, սովորողը պիտիլսի ծնողի առաջարկները, ուսուցումն արդյունավետ կազմակերպելու նրա մոտեցումները: Խթանեք, որպեսզի ծնողներն առաջարկեն օգնության իրենց տարբերակները, կիսվեն Ձեզ հետ իրենց կողմից արձանագրած հաջողություններով:[14]

1.3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրթական գործընթացում ծնողներին ներգրավելու և նրանց հետ արդյունավետ համագործակցելու նպատակով իրականացվող աշխատանքները տարվում են 4 հիմնական ուղղություններով՝ ճանաչողական, տեղեկատվական-վերլուծական, ակնառու-տեղեկատվական և ժամանցային: Ճանաչողական ուղղության նպատակն է ծնողներին ծանոթացնել երեխաների տարիքային և հոգեբանական զարգացման առանձնահատկություններին և նրանց մոտ ձևավորել երեխաների դաստիարակման գործնական հմտություններ: Այս ուղղությամբ աշխատանքներն իրականացվում են ընդհանուրկամ խմբային հավաքների, խորհրդատվությունների, անհատական զրույցների, սեմինարների, երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդեսների, ծնողների մասնակցությամբ հանգստի, ժամանցային միջոցառումների, համատեղ էքսկուրսիաների, զբոսանքների, արշավների կազմակերպման, բաց դասերի միջոցով:

Ծնողների մասնակցությամբ հանգստի, ժամանցային միջոցառումների, համատեղ էքսկուրսիաների, զբոսանքների, արշավների կազմակերպումը, ինչպես նաև բաց դասերը հնարավորություն են տալիս ծնողներին դիտարկել իրենց երեխաներին այնպիսի իրավիճակներում, որոնք տարբերվում են ընտանեկան իրավիճակներից, համեմատել իրենց երեխաների վարքն ու հմտությունները մյուս երեխաների վարքի և հմտությունների հետ, ուսուցիչներից ընդօրինակել դաստիարակության և ուսուցման մեթոդներ և հնարներ և,ի վերջո, ուսուցչի հետ համատեղ ստեղծել զարգացնող միջավայր երեխաների համար: Տեղեկատվական-վերլուծական ուղղության նպատակն է բացահայտել ծնողների հետաքրքրություններն ու պահանջմունքները, ինչպես նաև նպաստել ուսուցիչների, ծնողների և աշակերտների միջև հուզական կոնտակտի

հաստատմանը: Այս տարբերակում կարելի է կիրառել տարբեր մեթոդներ, օրինակ՝ անկետավորում, թեստավորում, անհատական զրույցներ. աշխատանքները պետք է սկսել ծնողների սոցիալական կարգավիճակի, դպրոցից նրանց սպասումների և ակնկալիքների վերլուծությունից: Ակնառու տեղեկատվական ուղղության նպատակն է տեղեկատվություն հաղորդող նյութերը ձևակերպել և մատուցել այնպես, որ գրավի ծնողների ուշադրությունը, ներկայացնել գեղագիտորեն,էսթետիկ ձևավորված, մշտապես թարմացնել դրանց պարունակությունը, որպեսզի չկորչի դրանց հանդեպ ծնողների հետաքրքրությունը (օրինակ՝ նյութը տպված լինի գունավոր թղթերի վրա, լինեն նկար-սիմվոլներ, երեխաների խմբային նկարներ և այլն): Ժամանցային ուղղությունը միտված է ստեղծելու ջերմ, վստահելի, հուզականհարաբերություններ ծնողների և ուսուցիչների, ծնողների և երեխաների, սովորողների և ուսուցիչների միջև: Աշխատանքների այս ուղղությունն ամենապահանջվածը, ամենացանկալին, ամենաօգտակարն է: Ժամանցները, տոները պետք է կազմակերպել ոչ թե ծնողների համար, այլ ծնողների անմիջական մասնակցությամբ, որպեսզի նրանք պատկերացնեն, թե որքան ուժ, եռանդ պետք է ներդնել ցանկացած միջոցառում կազմակերպելու համար: Արդյունավետ է նաև այդ միջոցառումներին բոլոր ծնողների համագործակցությունը, շփումը միմյանց հետ:[15]

1.4. ՀԱՄԱԳԵՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Երեխաները տարբեր են ինչպես իրենց բնույթով և մտածելակերպով,այնպես էլ կրթությանմեջ իրենց դժվարություններով:Նրանք կարող են դժվարություններ ունենալ կարդալիս, գրելիս, շրջապատող մարդկանց հետ հաղորդակցվելիս, որի համար էլ նրանց պետք է օգնել, աջակցել: Ոմանց մոտ դժվարությունները ժամանակավորբնույթ են կրում, իսկ ոմանք երկարատև մասնագիտական աջակցության կարիք են ունենում այդ դժվարությունները հաղթահարելու համար: Երբեմն կարող է միայն թվալ, թե խնդիրները երկարատև ու շարունակական աջակցություն ենպահանջում, բայց արի ու տես,որ ճիշտ պլանավորած քայլերի շնորհիվ հնարավոր է հասնել անսպասելի արդյունքներին:

Նույն խնդրին բախվեցի նաև ես, երբ ծանոթացա սովորողի խնդիրներին:

Սովորողը 7 տարեկան է ,ունիինտելեկտուալ մտավոր ֆունկցիայի,ձայնի և խոսքի ֆունկցիայի խանգարումներ, բնականաբար սովորողը ունի կրթությանաառանձնահատուկպայմանների կարիք: Նրա մոտնկատվում էինդժվարություններ ուսուցման գործընթացում, նկատելիէին հնչարտաբերման խանգարումներ. հնչյունները արտաբերում էր սխալ, աղավաղված, բնականաբար, խոսքը թերի էր, ոչ հասկանալի:Առնչվելով այս ամենին՝ օգտվեցի <<լուսակիր>>մեթոդից:(աղյուսակ 2)

Աղյուսակ 2.<<Լուսակիր>> մեթոդ

1-ին փուլ Դադարի պահ
2_րդ փուլ Նախազգուշացում
3-րդ փուլ Առաջընթաց

Առաջին փուլ (**դադարի պահ**) Այս փուլումմեզմոտ դադարի շրջան էր, սովորողի մոտ չէր ստացվում անվանել հնչյուն-տառերը : Մեթոդի նպատակն է փոքրիկ հուշումների միջոցով օգնել սովորողին, որպեսզի արտասանի հնչյուններիանունները , որի օգնությամբ էլ կարտասանիիրեն ծանոթ հնչյուն-տառերը .

օրինակ՝<<Ա >> հնչյուն-տառըարևն է, <<Ս>>հնչյուն-տառըսունկն է, <<ՈՒ>>հնչյուն-տառըուլն է:

Երկրորդ փուլ (մեթոդի կիրառում) Այս փուլում սովորողը սկսեց փոքր քայլերով շարժվել առաջ, մեթոդը սկսեց գործել՝տալով արդյունք:

Սովորողի հետ աշխատել ենք նաև հնչյունների տառապատկերներով կազմված համապատասխան նկար-բառերով (քարտեր): Որից հետո կրկնել ենք այդ հնչյուններով կազմված բառերը:

Երրորդ փուլ (արդյունք) Այս փուլում արդեն ունեինք գրանցված արդյունք:

Առաջնորդվել ենք այնխոսքերով , որ հանդուրժելը գործի սկիզբն է:Մեթոդը տվեց իր արդյունքը:Շնորհիվսովորողի հետհամատեղ աշխատանքի՝ հասանք այն արդյունքին, որ սովորողը ինքնուրույն էր անվանում իրեն ծանոթ հնչյուններով սկսվող նկար- բառերը:

Այսպիսով՝ մասնագետ-աշակերտ-ծնող-ուսուցիչ ճիշտ համագործակցությունը բերում է դրական արդյունքի՝բարելավելով երեխայի ուսումնառության գործընթացը:

Գլուխ 2. ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԿԱՐԵՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներառական կրթությունը պահանջում է մասնագետների և ընտանիքի կողմից համագործակցություն, երեխաների համար լավագույն միջավայրերի ստեղծումհամատեղ ջանքերով, որպեսզի վերջիններս հաջողության հասնեն դպրոցում և հասարակական կյանքում:

Զարգացման առանձնահատկությամբ սովորողներիընտանիքների և մասնագետների հանդիպումները տեղի են ունենում մանկավարժահոգեբանական գնահատման, քննարկումների, խորհրդակցությունների ժամանակ:Երբ ընտանիքներն ու մանկավարժները հանդես են գալիս որպես գործընկեր, ավելի հավանական է դառնում բոլոր երեխաների ուսումնառության հաջող ընթացքը:Ընտանիքի ներգրավումը կրթական գործընթացում տրամաբանական է և արդյունավետ:Երբեմն ընտանիքները դեմ են լինում թիմում ներգրավվելուն:Նրանք չեն պատկերացնում թիմում ներգրավվելու ընթացքը, իրենց դերը երեխայի հետ իրականացվելիք աշխատանքների պլանավորման մեջ՝ կարծելով, որ դա բացառապես մասնագետի կամ ուսուցչի անելիքն է:Երեխայի առաջադիմության նվարքի մասին ընտանիքին տեղեկացնելը էական նշանակություն ունի հարաբերությունների զարգացման գործում:Միայն խնդիրների մասին լսելով՝ ծնողները կարող են ձգտել քիչ առնչվել ուսուցչի հետ, ուստի կապը հետզհետե կխզվի:Ծնողների հետ շփման ժամանակ պետք է ստեղծել բարյացակամ և հաճելի միջավայր, պահպանել տվյալների գաղտնիությունը, տեղեկությունը հաղորդել բոլորին հասանելի բառապաշարով, առանցմասնագիտական եզրույթների, գործի դնել ակտիվ լինելու հմտությունները՝ ապրումակցմամբ և առանց քննադատելու:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը ավելի արդիական և պահանջված է:Մասնագետ–աշակերտ-ծնող–ուսուցիչ համագործակցությունը բավականին պատասխանատու գործընթաց է:

Կողմերը պետքէ քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում կրթության առաջնային շահերի՝ սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է:Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա:Կարևոր հանգամանք է նաև մանկավարժական խորհրդատվությունը:

Կարևոր է նաև փոխադարձ հարգանքն ու այն գիտակցումը, որ կողմերի արդյունավետ աշխատանքն ուղիղ համեմատական է արժեքային համակարգ ունեցող, դաստիարակված ու գիտակից անձնավորության ձևավորմանը:Կարևոր է նաև,որ ներառող ուսուցիչները հասկանան ընտանիքների դերը կրթության մեջ և ակտիվ, կառուցողական ձևերով նպաստեն նրանց ներգրավմանը:

Ա.Ս.Մակարենկոն ասել է.<<Մեր երեխաները մեր ծերությունն են:Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը , մեր արտասուքները , դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև>>:[16]

Որեմն կարողանանք ձևավորել կյանքի լայն իմացություն և տաղանդ, կարողանանք ճիշտ կրթության միջոցովդաստիարակել ու կերտել երկրի, ինչու չէ նաև աշխարհի ապագա պատմությունը:

Իմ հետազոտական աշխատանքում եկա այն եզրահանգման, որ ուսուցիչը , մասնագետը իր մասնագիտական աճը պետք է յուրաքանչյուր օր արձանագրի,նորը, նորամուծությունը հեշտությամբ յուրացնի, կարողանա համագործակցել թե՛գործընկերների ,թե՛ծնողների հետ,աշակերտին մատչելի ձևով սովորեցնելու գործընթացումկիրառի և՛ առարկայական, և՛ կյանքի հմտություններ, քանի որ առանց համագործակցության դպրոցում փոփոխություններն անհնարին են: Եռակողմ կապը ավելի ամրապնդելու համար ստորև ներկայացնում եմ իմ առաջարկությունները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հասարակության կարծրատիպերը կոտրելու համար սեմինարներ իրականացվենոչ միայն մանկավարժների համար, այլև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողներիև բոլոր աշակերտների ծնողների համար:
- Պարբերաբարծնողական ժողովներին անդրադառնալհամընդհանուր ներառական կրթության գաղափարախոսությանը՝ վեր հանելով առկա խնդիրները/ եթե կլինեն/:
- Երբեմն ծնողների հետ անցկացվեն փակ, անանունխորքային հարցազրույցներ, որպեսզիճիշտ ու հստակ լուծումներ տրվեն խնդիրներին, դժվարություններին, հոգեհուզական և վարքային իրավիճակներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=293

2.https://hy.wikipedia.org/wiki/%D5%8E%D5%A1%D5%BD%D5%AB%D5%AC%D5%AB_%D5%8D%D5%B8%D6%82%D5%AD%D5%B8%D5%B4%D5%AC%D5%AB%D5%B6%D5%BD%D5%AF%D5%AB

3. https://hmk.am/wp-content/uploads/2022/01/inchpes-khtanel-nerarumy-dasaranum.pdf

4. Антонов А.И. Семья как социальный институт // Основы социологии. Курс лекций. Изд. 2-е, часть II. - М.: «Знание», 1994, 304 с.

5. Տիքա, Ռ., Էբերի, Բ., Ջոնսթոն, Ք., Պողոսյան, Ա. և Հանթ, Փ. (Խմբ.) (2018) Ներառականկրթությանռազմավարություններ։Դասագիրք։Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան ։ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ.Աբովյանիանվանհայկականպետականմանկավարժականհամալսարան, Երևան, Հայաստան, 249 էջ։

6.https://hmk.am/wp-content/uploads/2022/01/inchpes-khtanel-nerarumy-dasaranum.pdf

7.https://www.unicef.org/armenia/media/3501/file/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf

8.https://www.unicef.org/armenia/media/3501/file/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf

9. Ермолова В. М. Модель психологической поддержки семей, воспитывающих детей с нарушениями в развитии // Курский госугарственный университет М.: 2011- 254с.

10.GeorgiaPrimaryEducationProjectԾնողներիներգրավվածությունը: Հանձնարարականներ տնօրենների և ուսուցիչներիհամար // USAID from the American people Թբիլիսի 2015, 39 էջ։

11. Տիքա, Ռ., Էբերի, Բ., Ջոնսթոն, Ք., Պողոսյան, Ա. և Հանթ, Փ. (Խմբ.) (2018) Ներառականկրթությանռազմավարություններ։Դասագիրք։Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան։ ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, 249 էջ։

12. Georgia Primary Education Project Ծնողներիներ գրավվածությունը: Հանձնարարականներ տնօրենների և ուսուցիչների համար // USAID from the American people Թբիլիսի 2015, 39 էջ։

13.https://hmk.am/wp-content/uploads/2022/01/inchpes-khtanel-nerarumy-dasaranum.pdf

14.https://hmk.am/wp-content/uploads/2022/01/inchpes-khtanel-nerarumy-dasaranum.pdf

15.https://hmk.am/wp-content/uploads/2022/01/inchpes-khtanel-nerarumy-dasaranum.pdf

16.Ա.Ս. Մակարենկո, << Դասախոսություններ երեխաների դաստիարակությամասին>>, Երևան, 1941: